

ԱՇԽԱՐՀԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀՈՍՔԵՐԸ

ՌՈՒՍ-ՌԻԿՐԱԻՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2022.2-83

Հիմնաբառեր. միգրացիոն ճգնաժամ, ռուս-ուկրաինական պայերազմ, փախստականներ, դրամական փոխանցումներ, սահմանափակումներ

Մարդկության պայությունն ողջ ընթացքն ապացուցում է, որ պայերազմները կործանարար են բոլոր կողմերի համար: Պայերազմն իր ճանապարհին ավերում է ամեն ինչ՝ մարդկային կյանքեր, տեսական համակարգեր ու ենթակառուցվածքներ, սոցիալական կապիտալ: Իրականում գնահատել, թե ինչպիսին է պայերազմի տեսական «գինը», բավական բարդ է, քանի որ անհրաժեշտ է հասկանալ, թե որքան կկազմեին երկրի եկամուտները պայերազմ չլինելու պարագայում: Պայերազմի տեսական հետևանքների կարևորագույն առանցք են դրանից բխող միգրացիոն ճգնաժամը հակամարտող երկրներում և դրա տարածման շրջանակն ամբողջ աշխարհում: Այս առումով, 2022 թվականի փետրվարի 24-ին սկսված ռուս-ուկրաինական պայերազմը կերպարանափոխում է միգրացիոն գործընթացներն ու իրավիճակն ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում:

Միգրացիոն հիմնախնդիրը տեսաբանների և հետազոտողների ուշադրության կենտրոնում հայտնվել է հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ պայմանավորված դրա հետևանքներով և հաղթահարման ուղիներ փնտրելով: Երկրի ու ամբողջ աշխարհի միգրացիոն համայնապատկերի փոփոխության ակնհայտ դրսևորում է 2022 թվականի փետրվարի 24-ին սկսված ռուս-ուկրաինական



Տարևիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ դասախոս

Գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը և մագիստրատուրան՝ «Միջազգային տեսական հարաբերություններ» մասնագիտությամբ: Այնուհետև կրթությունը շարունակել է ՀՊՏՀ «Միջազգային տեսական հարաբերություններ» ամբիոնի ասպիրանտուրայում: Երկու տարի աշխատել է Պեկինի բիզնեսի և տեխնոլոգիայի հասարակության՝ որպես այցելու գիտնական: Որպես փորձագետ և հետազոտող՝ աշխատել է մի շարք միջազգային կազմակերպություններում (EU4Culture, USAID, UNICEF, ILO, IMO և այլն): Այժմ աշխատում է նաև ՀՊՏՀ կարիերայի կենտրոնում: Հեղինակ և համահեղինակ է մի շարք գիտական հոդվածների:

ORCID - <https://orcid.org/0000-0001-6488-2717>

¹ Moon B. 'Paradigm in migration research: exploring morning as a schema'// Progress in Human Geography, V.19, No 4, 1995 p. 505-506.

պատերազմը: ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի տվյալներով՝ 41 մլն մշտական բնակչություն ունեցող Ուկրաինայում արդեն 10 մլն մարդ վտարվել է իր տնից²: Ընդ որում, տեղահանվածների մեկ երրորդը լքել է Ուկրաինան, ինչն առաջացրել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո փախստականների՝ ամենարագ կերպով տարածվող և մեծ ընդգրկում ունեցող միգրացիոն ճգնաժամը: Հաշվի առնելով այն, որ այս պահին Ուկրաինայում 18-60 տարեկան տղամարդկանց արգելվում է լքել երկիրը, փախստականները հիմնականում երեխաներ ու կանայք են:

Համաձայն ՄԱԿ-ի տվյալների³ արդեն մոտ 3.4 մլն ուկրաինացի փախստական ապաստան է փնտրել արտասահմանում, որից 3 մլն-ը հատել է Լեհաստանի հետ սահմանը: Լեհաստանի կառավարությունը լեհ-ուկրաինական 500-կիլոմետրանոց ընդհանուր սահմանի երկայնքով ընդունելության կետեր է ստեղծել, որտեղ կենտրոնացվում են փախստականներին տրամադրվող օգնությունները: Չնայած Լեհաստանի և Ուկրաինայի միջև պատմականորեն լարված հարաբերությունների⁴ առկայությանը՝ երկու ազգերը նաև մշակութային և լեզվական ընդհանրություններ ունեն, ինչը հանգեցրել է նրան, որ անգամ մինչև պատերազմը՝ Լեհաստանում աշխատող ուկրաինացի միգրանտների թիվը 1 մլն մարդ էր: Ընդ որում, մինչև 2015 թվականը ուկրաինացիների համար նախընտրելի միգրացիոն ուղղությունը Ռուսաստանն էր, իսկ դրանից հետո միգրացիայի գործընթացներն ու ուղղությունները նկատելիորեն փոփոխվել են: Այսպես՝ եթե դրամական փոխանցումները Ռուսաստանից դեպի Ուկրաինա 2015 թվականին ընդհանուրի 27%-ն էին, ապա 2021

թվականին՝ 5%-ը⁵: Հիմա Ուկրաինայից միգրանտների հիմնական նախընտրելի ուղղություններն են Լեհաստանը, Ռումինիան, Հունգարիան, Մոլդովան, Սլովակիան և Եվրոպական այլ երկրներ: 2022 թվականի մարտի 21-ի դրությամբ Գերմանիա է ժամանել ավելի քան 225 հազար ուկրաինացի փախստական: Ընդհանուր առմամբ, հատկանշական է, որ, ի տարբերություն 2015 թվականի Եվրոպական միգրացիոն ճգնաժամի, որը պայմանավորված էր Միջին Արևելքում, Ասիայում և Աֆրիկայում պատերազմական գործողություններով, ուկրաինացի փախստականներն ավելի հյուրընկալորեն են ընդունվում հարևան Եվրոպական երկրներում: Եվրամիության անդամները միաձայն քվեարկությամբ որոշում են ընդունել ուկրաինացի փախստականներին⁶ 3 տարի ժամկետով լիարժեք մուտքի իրավունք տալ դեպի Միություն⁷: Եվրոպական երկակի չափորոշիչները ևս մեկ անգամ վկայում են, որ իսլամական ծայրահեղականության նկատմամբ Եվրոպացիների մտավախությունը մեծ է: Այս ամենն առիթ է դարձել միջազգային կազմակերպությունների (այդ թվում՝ Միգրացիայի միջազգային կազմակերպության) կողմից խտրականության, բռնության և այլատյացության դեմ պայքարի կոչեր ու հորդորներ հնչեցնելու⁸: Ընդհանուր առմամբ, հստակ է այն, որ ուկրաինացի փախստականներն այս հումանիտար ճգնաժամը հաղթահարելու համար ունեն միջազգային հանրության լիարժեք աջակցությունը: Այս ամենից բացի, աշխարհում դեռ շարունակվում է COVID-19 համավարակի տարածումը, իսկ պաշտոնական տվյալներով՝ ուկրաինացիների ընդամենը 35.7%-ն է պատվաստված⁹, ինչն առողջապահական ծառայություններին՝ միգրանտների ու

² <https://www.unhcr.org/data.html>
³ Նույն տեղում:
⁴ Լեհաստանը դարեր շարունակ իշխում էր Ուկրաինայի զգալի թվով տարածքների վրա՝ ճնշելով ուկրաինացիների ինքնադրստրուումն այդտեղ:
⁵ Russia-Ukraine Conflict: Implications for Remittance flows to Ukraine and Central Asia, Dilip Ratha, Eung Ju Kim, March 2022, <https://www.knomad.org/publication/russia-ukraine-conflict-implications-remittance-flows-ukraine-and-central-asia>
⁶ Համաձայն ՄԱԿ-ի փախստականների գրասենյակի սահմանման՝ փախստականները մարդիկ են, որոնք փախել են պատերազմից, բռնությունից, հակամարտությունից կամ հալածանքներից և հատել միջազգային սահմանը՝ այլ երկրում ապաստան գտնելու համար:
⁷ https://ec.europa.eu/home-affairs/policies/migration-and-asylum/common-european-asylum-system/temporary-protection_en
⁸ <https://www.iom.int/news/discrimination-and-racism-against-third-country-nationals-fleeing-ukraine-must-end-iom-director-general>
⁹ <https://graphics.reuters.com/world-coronavirus-tracker-and-maps/countries-and-territories/ukraine/>

փախստականների հասանելիության անհրաժեշտություն է առաջացնում:

Պատերազմը լուրջ հարված է հասցրել նաև դրամական փոխանցումներին ու դրանց ընդհանուր ծավալներին: Դրամական փոխանցումները ճգնաժամային իրավիճակներում ֆինանսական աջակցության առաջնային ձև են: Ինչպես Ուկրաինայում, այնպես էլ Ռուսաստանում այս պահին ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների կազմակերպման գործընթացի լուրջ խնդիրներ կան: Հատկապես SWIFT փոխանցման համակարգից Ռուսաստանի անջատումը վատ է անդրադառնալու դեպի Կենտրոնական Ասիա դրամական փոխանցումների ծավալի վրա: Մյուս կողմից, դրամական փոխանցումներ կատարող որոշ ընկերություններ հայտարարել են Ուկրաինա գումար ուղարկելու համար միջնորդավճարներից հրաժարվելու մասին:

Ուկրաինայի ազգային բանկի տվյալների համաձայն՝ 2021 թվականին դեպի Ուկրաինա դրամական փոխանցումները գերազանցել է 19 միլիարդ ԱՄՆ դոլարը¹⁰: 2020 թվականին՝ COVID-19-ով պայմանավորված 3.6% անկումից հետո, դրամական փոխանցումների հոսքերը 2021 թվականին աճել են սպասվածից ավելի բարձր

տեմպերով՝ 28.3%: Դրամական փոխանցումներն Ուկրաինայի ՀՆԱ մոտ 12%-ն են, ինչը գրեթե երեք անգամ գերազանցում է օտարերկրյա ուղղակի ներդրումների մասնաբաժինը: Ըստ Համաշխարհային բանկի կանխատեսումների¹¹՝ դրամական փոխանցումները դեպի Ուկրաինա 2022 թվականին կարող են ավելանալ առնվազն 8%-ով: Սա պայմանավորված է նրանով, որ պատերազմի ժամանակ հայրենիքում գտնվող ընտանիքներին աջակցելու համար ուկրաինացի միգրանտներն ավելի շատ դրամական փոխանցումներ կկատարեն:

2015–2021 թվականներին Լեհաստանից Ուկրաինա դրամական փոխանցումների տեսակարար կշիռը 19%-ից հասել է 39%-ի: Մյուս կողմից, Ռուսաստանից իրականացվող դրամական փոխանցումներից մեծ կախվածություն ունեն Կենտրոնական Ասիայի երկրները: Օրինակ՝ 2021 թվականին Դրոզգատանում ստացված դրամական փոխանցումների 83%-ը Ռուսաստանից էր: Ռուսաստանից դեպի Ադրբեջան, Տաջիկստան և Ուզբեկստան դրամական փոխանցումների միջինում ավելի քան 50%-ը ռուսական ծագման է: Ընդ որում, Ռուսաստանից ստացվող դրամական փոխանցումներն այդ երկրների հա-

ԱՂՅՈՒՍԱԿ 1


Դեղադրձական արտադրանքի ծավալն ընթացիկ գներով, 2010-2020 թթ., մլն դրամ¹²

Երկիր	Դրամական փոխանցումների ներհույքը (մլն ԱՄՆ դոլար), 2020 թվական	%-ը՝ ՀՆԱ-ում, 2020 թվական	Դրամական փոխանցումները Ռուսաստանից, 2021 թվականի հունվար-սեպտեմբեր	Մինչև պատերազմը կանխարեւիտող աճը 2022 թվականի համար	Պատերազմից հետո կանխարեւիտող աճը 2022 թվականի համար
Հայաստան	1327	10.5%	59%	11%	-19%
Ադրբեջան	1403	3.3%	62%	3%	-23%
Բելառուս	1014	1.7 %	42%	15%	-8%
Վրաստան	2110	13.3 %	18%	2%	-5%
Ղազախստան	374	0.2 %	51%	7%	-17%
Դրոզգատան	2423	31.3 %	83%	3%	-33%
Մոլդովա	1877	15.7 %	14%	6%	0%
Տաջիկստան	2187	26.7 %	58%	2%	-22%
Ուկրաինա	15213	9.8 %	5%	2%	8%
Ուզբեկստան	6980	11.6 %	55%	3%	-21%

¹⁰ <https://bank.gov.ua/en/>

¹¹ <https://blogs.worldbank.org/peoplemove/russia-ukraine-conflict-implications-remittance-flows-ukraine-and-central-asia>

¹² Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի վիճակագրական տվյալները և կանխատեսումները՝ <https://blogs.worldbank.org/peoplemove/russia-ukraine-conflict-implications-remittance-flows-ukraine-and-central-asia>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1



ՀՀ սահմանահատումների ընդհանուր հաշվեկշիռը, Ռուսաստանի և Ուկրաինայի հետ սահմանահատումների հաշվեկշիռը, 2012-2021 թթ.

մար մեծ կարևորություն ունեն:

Այսպես, օրինակ, 2020 թվականի դրամական փոխանցումները Ղրղզստանի և Տաջիկստանի ՀՆԱ-ների համապատասխանաբար՝ 31 և 27 տոկոսն են: Ելնելով ռուս-ուկրաինական պատերազմից՝ կարող ենք հստակ կերպով արձանագրել, որ դրամական փոխանցումները Ռուսաստանից բավական նվազելու են, ինչն իր շղթայական ազդեցությունն է թողնելու միգրացիայի ծագման երկրների, այդ թվում՝ Հայաստանի վրա: Պատերազմի հետևանքով Ռուսաստանի տնտեսության թուլացումը հանգեցրել է միգրանտների զբաղվածության ու եկամուտների ապահովման հիմնախնդիրների առաջացմանը՝ ուղղակիորեն ազդելով միգրանտի՝ դրամական փոխանցում կատարելու կարողության վրա: Մյուս կողմից, ռուսական ռուբլու արժեզրկումը հանգեցնում է դրամական փոխանցումների իրական արժեքի կրճատմանը:

Հայաստանի տնտեսությունը չափազանց զգայուն է ռուսական տնտեսական ցնցումների նկատմամբ, ինչն ապացուցվել է դեռևս 2014 թվականին, երբ ռուս-ուկրաինական պատերազմն ու դրան հաջորդող իրադարձություններն իրենց ուղղակի ազդեցությունն ունեցան ՀՀ միգրացիոն

գործընթացների վրա: 2014 թվականին Հայաստանում ապաստան հայցող անձանց 50%-ը կամ 114 մարդ Ուկրաինայի քաղաքացիություն է ունեցել¹³: Բացի այդ, ըստ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության տվյալների, 2012 թվականին Հայաստանում Ուկրաինայի քաղաքացիություն ունեցող անձանց սահմանահատումների հաշվեմնացորդը կազմել է -109 մարդ¹⁴, 2014 թվականին՝ 688 մարդ¹⁵ (գծապատկեր 1):

Գծապատկեր 1-ում առկա տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ 2012-2021 թվականների ընթացքում միայն 2020 թվականին է, որ Հայաստան մուտք գործողների թիվը գերազանցել է մեկնողների թիվը: Մյուս կողմից, եթե դիտարկենք նույն ժամանակահատվածում Հայաստանից դեպի Ռուսաստան սահմանահատումների շարժընթացը, ապա կտեսնենք, որ միայն 2014-2015 և 2020 թվականներին են ՀՀ համապատասխան հաշվեկշռում ելքերը գերազանցել մուտքերը՝ արձանագրելով բացասական ցուցանիշ: Իսկ Ուկրաինայից դեպի Հայաստան սահմանահատումների շարժընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2012-2021 թվականների ընթացքում սահմանահա-

¹³ ԻՀայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2014, էջ 110 https://www.armstat.am/file/article/demog_2015_7.pdf
¹⁴ http://migration.am/content/pdf/Boundaries_2012.pdf
¹⁵ http://migration.am/content/pdf/Boundaries_2014.pdf

տումների թիվը եղել է 1455:


2018 թվականից սկսած՝ ՀՀ սահմանա-
հատումների հաշվեկշռի վերլուծությունից
պարզ է դառնում, որ դրա մնացորդը
դրական է: Ընդ որում, ըստ քաղաքացիու-
թյան երկրի սահմանահատման շարժ-
ընթացի, 2018 թվականին, նախորդ տար-
վա համեմատ, Ռուսաստանի քաղաքացի-
ների՝ ըստ մուտքի սահմանահատման քա-
նակն ավելացել է 17%-ով (684014 մարդ),
ըստ ելքի՝ 16.2%-ով, իսկ հաշվեկշիռը՝ ավե-
լի քան երկու անգամ: Միաժամանակ, Հա-
յաստանի քաղաքացիների սահմանահատ-
ման շարժընթացի վերլուծության արդյուն-
քում պարզվում է, որ 2017 թվականին
այդ թիվը -36201, իսկ 2018 թվականին՝
-4585 մարդ է: Այս ամենը կարելի է բա-
ցատրել 2018 թվականի ապրիլին տեղի
ունեցած իշխանափոխության իրադար-
ձություններով, որոնց արդյունքում մարդ-
կանց շրջանում ձևավորվել էին դրական
սպասումներ:

2022 թվականի ռուս-ուկրաինական պա-
տերազմը պատճառ է դարձել, որ տասնյակ
հազարավոր մարդիկ Ռուսաստանից, Ուկ-
րաինայից, Բելառուսից՝ փախստականի,
ներգադրայի կամ զբոսաշրջիկի կար-
գավիճակով, ժամանեն Հայաստան: Հա-
յաստանում Ուկրաինայի դեսպանատան
տվյալներով՝ վերջին երեք շաբաթվա ըն-
թացքում ՀՀ սահմանը հատել է Ուկրա-

ինայի մոտ 4000 քաղաքացի, հիմնակա-
նում՝ ազգությամբ հայ¹⁶:

Գծապատկեր 2-ում ներկայացվել է
2012-2021 թվականների ընթացքում Ռու-
սաստանի և Ուկրաինայի՝ ըստ ելքի ու մուտ-
քի սահմանահատումների մասնաբաժի-
նը ՀՀ համապատասխան ցուցանիշում:
Փաստորեն, այդ ժամանակահատվածում
Ռուսաստանից դեպի Հայաստան ըստ
մուտքի սահմանահատումների միջինը
կազմել է ընդհանուր մուտքերի 18.96%-ը,
իսկ Ուկրաինայից դեպի Հայաստան՝
1.02%-ը: Իսկ ինչ վերաբերում է ըստ ելքի
սահմանահատումների վերլուծությանը,
սպա այդ ցուցանիշը Ռուսաստանից դեպի
Հայաստան սահմանահատումների դեպ-
քում միջինը կազմել է ընդհանուր մուտ-
քերի 18.75%-ը, իսկ Ուկրաինայից մուտ-
քերը՝ միջինը 1.0%:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ միգրանտ-
ների հետաքրքրությունը Ռուսաստանի
նկատմամբ միշտ էլ մեծ է եղել: Սակայն,
հաշվի առնելով այն փաստը, որ հայաս-
տանցի միգրանտները հիմնականում ներ-
գրավված են շինարարության ոլորտում,
ընթացիկ պատերազմով պայմանավոր-
ված, վստահորեն կարելի է կանխատե-
սել, որ 2022 թվականին կտրուկ կրճատ-
վելու է ոչ միայն Հայաստանից Ռուսաս-
տան մեկնողների թիվը, այլև Ռուսաստա-
նից Հայաստան դրամական փոխանցում-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Ռուսաստանի և Ուկրաինայի՝ ըստ ելքի ու մուտքի սահմանահատումների մասնաբաժինը ՀՀ ընդհանուր սահմանահատումներում (%), 2012-2021 թթ.

¹⁶ <https://armenpress.am/arm/amp/1078164>

ների ծավալները: Մյուս կողմից, անզեն աչքով նկատելի է պատերազմի սկզբից Ռուսաստանի և Ուկրաինայի քաղաքացիների ներհոսքը Հայաստան, որոնց գերակշիռ մասը բարձր որակավորում ունեցող մասնագետ է՝ հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Հայաստանի աշխատանքի շուկայում և, հատկապես, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհավասարակշռության մասին պարբերաբար բարձրաձայնվել է տարբեր հարթակներից: Ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով Հայաստանում դեռևս ժամանակավորապես բնակություն հաստատած բարձր որակավորում ունեցող մասնագետները կարող են այդ բացը լրացնել, եթե նրանց համար ստեղծվի անհրաժեշտ միջավայր մշտական բնակության և աշխատելու համար: Հատկանշական է, որ անկախության գրեթե ողջ ժամանակահատվածում Հայաստանը ռուսական շուկայի համար եղել է միգրանտներ «ներարկող երակ»: Հայաստանից մեկ-

նողների հիմնական շարժառիթը արժանավայել աշխատանքի և ավելի լավ կյանքի փնտրտուքն է: 2020 թվականին COVID-19 համավարակի տարածումն ու Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը նոր մարտահրավերներ են առաջադրել ՀՀ-ին՝ ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ ժողովրդագրական առումներով: Սակայն, ռուս-ուկրաինական իրադարձությունների հետևանքով եղել է այնպես, որ Հայաստանը հնարավորություն է ստացել դառնալու միգրանտներ ընդունող երկիր: Այդուհանդերձ, զարգացման նման սցենարի իրագործման համար բավական լուրջ ջանք է պահանջվում՝ պետական հստակ քաղաքականության իրականացմամբ և արդյունավետ կառուցակարգերի ներդրմամբ: Իսկ թե համապատասխան գերատեսչությունը որքանով ճկուն ու թիրախային կզտնվի ու կկարողանա օգտվել տնտեսագիտության մեջ հայտնի՝ «ջարդված պատուհանի» սկզբունքից, Հայաստանը դարձնելով միգրացիայի նպատակակետ երկիր, ցույց կտա միայն ժամանակը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bijak J., Czaika M., Assessing Uncertain Migration Futures: A Typology of the Unknown, QuantMig background paper D1.1, 2020, University of Southampton.
2. Chepel S., Tukhtarova E., Neklyudova N., Inclusive Growth and International Labour Migration, Institute for Forecasting and Macroeconomic Research, Tashkent, Uzbekistan, Institute of Economics, Ural Branch of the Russian Academy of Sciences, Russia, Ural State Economic University, Russia, ECCW 2020, SHS Web of Conferences 90, 01006, 2021, p. 1-11, p. 2.
3. Kleven H., Landais C., Muñoz M., Stantcheva S., Taxation and migration: Evidence and policy implications, Journal of Economic Perspectives, ISSN 0895-3309, 2020, 34 (2). pp. 119-142., p. 120.
4. Moon B., Paradigm in migration research: exploring morning as a schema, Progress in Human Geography, V.19, No 4, 1995, p. 505-506.
5. Ratha D., Kim J. E., Russia-Ukraine Conflict: Implications for Remittance flows to Ukraine and Central Asia, March 2022, <https://www.knomad.org/publication/russia-ukraine-conflict-implications-remittance-flows-ukraine-and-central-asia>
6. <https://www.unhcr.org/data.html>
7. <https://ec.europa.eu/en>
8. <https://www.iom.int>
9. <https://graphics.reuters.com/world-coronavirus-tracker-and-maps/>
10. <https://bank.gov.ua/en/>
11. <https://blogs.worldbank.org/>
12. <https://www.armstat.am>

Татевик ВАРДАНЯН*Преподаватель кафедры международных экономических отношений, АГЭУ***МИГРАЦИОННЫЕ ПОТОКИ МИРА И АРМЕНИИ В КОНТЕКСТЕ
РОССИЙСКО-УКРАИНСКОГО КОНФЛИКТА**

Общий взгляд на историю человечества доказывает, что войны разрушительны для всех сторон. Война уничтожает все на своем пути: человеческие жизни, экономические системы и инфраструктуру, социальный капитал. На самом деле оценить экономическую «цену» войны достаточно сложно, так как необходимо понимать, каковы были бы доходы страны при отсутствии войны. Ключевым столпом экономических последствий войны является возникший миграционный кризис в конфликтующих странах, масштабы его распространения по всему миру. В связи с этим начавшаяся 24 февраля 2022 года российско-украинская война трансформирует миграционные процессы и ситуацию как во всем мире, так и в Армении.

Ключевые слова: *миграционный кризис, российско-украинская война, беженцы, денежные переводы, пересечение границы*

Tatevik YARDANYAN*Lecturer of the Chair of International Economic Relations, ASUE***MIGRATION FLOWS OF THE WORLD AND ARMENIA IN THE CONTEXT OF THE RUS-
SIAN-UKRAINIAN CONFLICT**

The overall look at human history proves that wars are destructive for all parties. War destroys everything on its path: human lives, economic systems and infrastructure, social capital. In fact, estimating the economic “price” of war is quite difficult, as it is necessary to understand how much the country's income would be in the absence of war. A key pillar of the economic consequences of the war is the resulting migration crisis in the conflicting countries, the extent of its spread throughout the world. In this regard, the Russian-Ukrainian war, which began on February 24, 2022, is transforming migration processes and the situation both around the world and in Armenia.

Key words: *migration crisis, Russian-Ukrainian war, refugees, remittances, border crossings*